

բու եղանակները, մեծ բծախնդրութեամբ պահուած վանքին մէջ եւ ամէնօրեայ գործածութեամբ նուիրականացած, ունին աւելի աւանդական դիմ մը, յաճախ աւելի գնայուն ընթացք եւ նախնականութիւն, բացի նորամուտ ստեղծներէն:

Այս տեսակէտով ալ, մեր վերածնունդի պատմութեան մէջ, Մխիթար Աբբա-հայր ունի փրկարար դեր մը:

* * *

Համագումարի նիստերուն համընթաց՝ տեղի ունեցած են բազմաթիւ երգահան-դէսներ, մասնակցութեամբ եւրոպական լաւագոյն խմբերգներու, աշխարհահռչակ ղեկավարներու ճալատին ներքեւ:

Յուլիսի 5ի իրիկունը, Շաշեոյի պալատին մէջ տեղի ունեցած երգահանդէսի յայտագրին հինգ մասերէն մէկը նուիրուած է հայկական երգեցողութեան:

Փարիզի Սիմիան-Կոմիտաս երգչախումբը, զօրացած հայ եւ օտար լաւագոյն երգիչ-երգչուհիներով, Կաթող. Ս. Խաչ եւ կեղեցւոյ Դպրաց դասով, շուրջ 130 հոգի, ղեկավարութեամբ տաղանդաւոր Պր. Կարպիս Ափրիկեանի, արժանաւայել կերպով կը ներկայացնէ մեր կրօնաշունչ երգեցողութիւնը, որոտընդոստ ծափեր խլելով ներկաներէն, եւ ծափերուն հետ նաեւ միջազգային հասարակութեան զմայլանքն ու գնահատանքը:

Յաղթանակի գիշերն է այդ տօնական, ոչ միայն Փարիզահայութեան, այլ նաեւ ամբողջ հայութեան, որուն գաւազները կը բարձրանան բեմ. ու բեմին ոսկեգրուադ խորքին վրայ, շողողուն լոյսերու ցոլքին տակ, միջազգային դրօշներով շրջապատուած, հսկայ երգահոնի աջն ու ձախը առկա, կանգուն է վկան նաեւ մեր մարտիրոսագրութեան:

Կը բացուի վարագոյրը, կը խայտան հայրերգները. կը հնչէ երգահոնը դաշն ու խորհրդաւոր. Հրաշափառ Աստուած: Ս. Գրիգոր Լուսաւորչի մարտիրոսագրութեան ու յաղթանակի երգն է ատիկա: Ու այդ

գիշեր Հրաշափառը դարձած է նաեւ հայ ազգին յաղթանակի երգը:

Կը սկսի խմբերգը, քառաձայն. Տէր կեցո, Տէր ողորմեա, Մեծացուցի (Կոմիտաս Վարդապետի), Սուրբ սուրբ, Հայր մեր (Մ. Եկմալեանի), Էակից Հօր (Գ. Զ. Նարեկան, Վենետիկի եղանակ, ըստ Հ. Ղ. Վ. Տաշեանի ձայնագրութեան). կը փակուի Կոմիտաս Վրդ. Ի Գովեա Երուսաղէմով:

Խօսնակը, նախ քան յայտագրի գործադրութիւնը՝ ամփոփ պատմականը կ'ընէ հայ եկեղեցական երգեցողութեան. կը յիշէ բազմաձայնի վարպետ Կարա Մուրզայի, Մակար Եկմալեանի եւ Կոմիտաս Վարդապետի վաստակը: Ապա իւրաքանչիւր երգէ առաջ՝ բարձրախօսով կու տայ բացատրութիւնը եւ թարգմանութիւնը:

Այս յաջողութեան կողքին՝ հարկ է նաեւ նկատել որ շատ քիչ տեղ տրուած է հայկական բուն շարականին, միաձայն շարականին. եւրոպական լուրջ թերթեր նկատել տուած են որ Համագումարի մասնակցներուն համար շատ հետաքրքրական պիտի ըլլային այդ տեսակի երգերը: Բազմաձայնը, մանաւանդ նկատի առած անոր նորամուտ բնոյթը, որքան ալ չքեղ ու հանճարեղ՝ չի գոհացներ իրենց ուսումնաստենչ ու պրպտող հոգին, որ կ'ուզէ հասնիլ ամէնէն նախնականին, հինին. ինչպէս եւրոպականին մէջ՝ Գրիգորեանին զանազան տեսակներուն: Մեր համերգին մէջ ալ տեղ տրուած է այդ, միաձայն շարականին, բայց երգուած է միայն արական խումբի մը կողմէ, այն ալ վերածուած ու սակաւ տարրերով:

Ասիկա առիթ մըն է մեզի, ուրեմն, որ պէտքի աւելի եւս գնահատենք մեր թաքուն գանձերը, եւ եւրոպական շրջանակներուն մէջ ներկայանալու պահուն, գիտնաճախն ժամանակին ու դարուն իսկական պահանջները գոհացնել. ասով աւելի եւս բարձրացուած կ'ըլլանք հայ ազգին անունն ու վարկը:

Հ. Ն.

ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ի ՊԱՏՈՒԻ

Սարգիս Խաչատուրեան յարութիւն առած է. կ'ապրի. կ'ապրի իր գործով. կ'ապրի հնդկական արուեստի հրաշալիքներով, որոնք այսօր իր փառքի դափնեպսակը կը կաղմեն: Իտալացի բազմաթիւ արուեստագէտներ յարգանքով, խանդավառ գնահատանքով, անսահման պաշտով, մոռնելով կը մօտենան անոր նկարներուն, որոնց ընդմէջէն հաղարամեայ քաղաքապետութիւն մը կը յայտնէ, Պոլսոտայական կրթութիւն մը կը յայտնէ, իր աշխարհը, իր մտածելակերպերով, իր հաւատալիքներով եւ հարազատ աշխարհահայեացքով:

Հոռմ, Վենետիկ ու Միլան. ահա ցուցահանդէսի երեք կայանները՝ ուր չորս ամսուան ընթացքին տեսանք անընդհատ խոստումը գեղարուեստասէր ընտրանիին եւ ոգեւորութիւնը մանաւանդ իտալացի կաղամկերպիչներուն:

Նախաձեռնութիւնը կը պարտինք Միլան ու Հեռաւոր Արեւելքի ուսումնասիրութեան նուիրուած իտալական Հաստատութեան:

Հոռմ, 1-12 Յուլիս,
Վենետիկ, 20-31 Յուլիս,
Միլան, 22-30 Հոկտեմբեր:

Տեղական թերթերը, շուրջ տասնեակ մը, մեծամեծ գովեստներ կը շուրջեն, դրուատելով մարդկային գեղարուեստին պատմութեան այդ գլուխգործոցներուն հետ նաեւ մեծ արժէքները հայ նկարիչին: Ամէնքն ալ կ'ընդծէին անոր հայկական ծագումը. եւ ասիկա պարծանք մըն է մեր ցեղին եւ անոր հնդկարուական ծագումին:

Յուցահանդէսներու բացման առթիւ կը բանախօսէր Փրոֆ. Պոստալի, Հոռմի Գեղարուեստից Կաճառէն. ներկայ էին պետական ու կրթական ներկայացուցիչներ, մշակութային հաստատութիւններու

նախագահներ: Վենետիկի ու Միլանի մէջ աւանտես եղանք նաեւ խանդավառութեան եւ ծածուկ հպարտութեան այն բազմաթիւ ազգայիններուն, որոնք փութացեր էին պատուել մեծ նկարիչը:

Այս խանդավառ ցոյցերուն ընթացքին, մեծամեծ շնորհաւորութիւններու կ'արժանանար նկարիչին ազնիւ Տիկինը, Տիկ. Վալա Խաչատուրեան, որ գիտցած է արժանաւայել զոհողութիւններով գերազանահատել իր պատուական ամուսնին վերածինի ստեղծագործութիւնները եւ արժէքաւորել վանոնք միջազգային բեմի վրայ:

Ի՞նչ էր արժէքը այս ցուցահանդէսին: Սարգիս Խաչատուրեանի նկարչական վերելքը երեք հանգրուաններ ունի. Կովկաս, Պարսկաստան, Հնդկաստան: Իր ուսումները Հոռմ աւարտած, իտալական կապոյտին դիւթանքով արբելու, կ'անցնի Փարիզ ու Միլանի, ուր աւելի եւս կը խորանայ վրձինի գաղտնիքին մէջ: 1915-1920ի շրջանին մեկուսացած է Թիֆլիս, ուր խորապէս կը տպաւորուի հայկական դէպքերու եւ գաղթականներու ողորմուկ երեւոյթներէն. հայ ողբերգութիւնը կը դառնայ նիւթ իր անդրանիկ ստեղծագործութիւններուն:

«Չգոհացող հոգիս կ'ըսէր ինքն իսկ Խաչատուրեան, զիս ստիպեց նոր աշխարհներ յորոնել, որովհետեւ չէի ուզեր լճանալ առհասարակ եւ միակողմանի կերպով ներկայացնել արուեստը»: Այնուհետեւ կը նուիրուի ուսումնասիրելու Շահ Աբբասեան դարաշրջանի որմանկարները, մեծ մասով եղծանած գործեր. ու կը յաջողի վերակազմել վանոնք՝ ի յայտ բերելով հսկայ տաղանդ ու համբերատար նկարադիր եւ աննկուն կորով: Համբաւը արդէն իսկ անցած է Պարսկաստանի սահմաններէն դէպի արտասահման:

Պոլտոտայական արուեստի աննման գեղեցկությունները կ'առնեն զինք դեպի Հնդկաստան, ուր 1937-ին ապրիլ, արհամարհելով անսպասելի նեղություններ, եւ աննկարագրելի դժուարություններ, ինչպէս ինքն իսկ յայտարարած է, այնպիսի մէկ հաւաքածոյ մը կը վերադառնայ, որ լաւագոյնն է աշխարհի մէջ, ըստ հնդկի եւ անգլիացի մեծամեծ քննադատներու:

Ահա այս վերջին շրջանի 50 կտորներն են որ ցուցադրուած էին Հոռոմ, Վենետիկ ու Միլան. ոմանք տարօրինակօրէն մեծ են, ինչպէս փիղերու թափօրը, գրեթէ 8 մեդր երկայնքով:

Խիզախ է եւ միաժամանակ հսկայ այն գաղափարը զոր վարպետօրէն հետապնդած է խաչատուրեան. վերարտադրել՝ բնական եւ իրական մեծութեամբ եւ առարկայական շունչով՝ պոլտոտայական հին ազօթալայերու որմանկարները:

Տասնեւեկէ հասար կը ներկայացնեն Աճանաչի 29 վիճակներ տաճարներու որմանկարներ. սրբազան կեդրոնն էր այդ, Ե. եւ Զ. դարերուն, Յ. Ք. պոլտոտայական միանմաններու:

Տասը կտոր Բազի ինը տաճարներէն մէկուն մէջէն միայն:

Ուրիշ վերարտադրություններ Բազմի, Սիտտանաւասալ, Սիկիրիա, Պոլոննարովա կոչուած վայրերուն մէջ ծածկուած մեհակներէն: Բազմին շինուած է 578 թ. Յ. Ք.:

Բայց ի՞նչ վերարտադրություններ. վերաստեղծում պէտք է կոչել խաչատուրեանի նկարները: Մինչ ցուցահանդէսի շրջանին լոյսերուն տակ կը ծիծախան արուեստի այս հրաշալիքները, խորհիլ որ անդին, հազարաւոր մղոններ հեռու, անոնց իրականները թաղուած են մութին ու խոնավութեան բորբոսին տակ, յաճախ անմատչելի քարայրներու մէջ...:

«Հրաշալի յարուստներ մըն է ասիկա՝ կ'ըսէր չինացի գեղարուեստագէտ մը՝ Միլանի ցուցահանդէսին բացման պահուն.

յարուստներ, որ Պոլտոտայական արուեստին անմահութիւնը կը յաւերժացնէ»: Ու կը շնորհաւորէր մեզ հայերս, իբրեւ արեւնակից ազգակիցները այդ մեծ արուեստագէտին: Զէ՞ որ անով հայութիւնն ալ կը յաւերժանար միջազգային գեղարուեստի պատմութեան մէջ:

Գիծերու նրբութիւն, մատներու շարժումներու ազնուականութիւն, գաղափարի վեհութիւն, դէմքերու բնականութիւն եւ զոյներու հրաշալի ձուլումներ կը դիւթեն մեզ իսկապէս. այդպիսի հրաշալիքներ, պոլտոտայական միանմաններու վրձնով դրժուած, մեզ կը փոխադրեն բոլորովին նոր ու տարբեր աշխարհի մը մէջ. յեղաշրջութիւն մը կը ծնանին մեր մտքին մէջ, որ վարժ է գեղարուեստի հրաշալիքներ փնտռել վերածնունդի դարերէն ապրիս:

Պոլտոտայի փորձութիւնը, փիղերու թափօրը, ամպածրար դէմքեր, նուսուփարներու դիւթիչ լնակը, ազօթաւոր աստուածութիւններ, կանացի սիրագեղ դէմքեր, պարուհիներ կը ներկայանան այնտեղ ամէնէն ազնուական ու նուրբ ձեւերով, կատարեալ ու գրաւիչ դիմագիծերով. զգեստի ծալքերու նրբերանգներ, զոյներու անհատնում երանդաւորումներ կը զրաւեն այցելուն, որ անդիտակցօրէն կը շրջի ու կրկին կը դմայի միեւնոյն նկարներուն դիմաց՝ նորանոր անդրադարձութիւններով:

Հրաշք մըն ալ ինքնին այն է՝ թէ ի՞նչպէս կարողացեր է խաչատուրեան այս դործը գլուխ հանել. եւ ի՞նչ նախնական միջոցներով. երբեմն հարկ եղած է որ տեղացի սպասաւոր մը գողաւոր հայելիով արեւուն ճառագայթները շեղէր դէպի այն որմանկարը, զոր կ'ուզէր խաչատուրեան ուսումնասիրել եւ վերարտադրել ամէն մանրամասնութիւններով եւ հարազատութեամբ հանդերձ:

Ուրեմն կ'ապրի խաչատուրեան եւ իր դործով կը յաւերժացնէ նաեւ ամբողջ ազգ մը՝ հնդկականէն աւելի՝ հայը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲՈՍԱՅԱԾԵՆՔ

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏՆԱԴԱՐԱՆԻ
ՎԱՐՁՈՒԹԵՆՆԵՐ

ԱՍՈՒԵԱՆ ՀԻ. - Լիտատար Գերականութիւն Հայ լեզուի, համեմատութեամբ 562 լեզուների. հատոր Գ.: ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1957, էջ 1011: (Երկու օրինակ):
ՌՈՒԲԷՆ ԶԱՐԵԱՆ. - Սիւրանոյ 1857-1932: ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1957, էջ 342:
ՀՈՄԵՐՈՍ. - Աղիտական (Յունարէն բնագրից քարգմանց Սիմոն Գրգաւարեան. խմբագրութեամբ Սուրէն Վահունու): Հայպետհրատ, Երեւան, 1957, էջ 367: (Երկու օրինակ):
ՍՏԵՓԱՆԵԱՆ Հ. Ս. - Հայ քարտէզագրական հրատարակութիւններ 260 տարում (1695-1955). համառոտ ակնարկ: ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1957, էջ 158:

★

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ. - Հրատարակութիւն Համալսարանական Հայերենական Միութեան: Պոսքրմ, տպ. Հայրենիք, 1957, էջ 301:
ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ Հանրապետական շրջանի Իսթանպուլահայ Գրականութեան: Հրատարակչութիւն Արամեան Սանուց Միութեան: Իսթանպուլ, տպ. Վարդ, 1957, էջ 339:
ԲԱՐԱՉԵԱՆ Է. - Օտարարանութիւններ Հայ լեզուի մէջ: Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1957, էջ 29:
ԳԱՍՏԱՅԵՆՍԿԻ Ֆ. Մ. - Հեղինակ: (Թարգմանութիւն Զ. Միքայելեանի): Թեհրան, 1954, էջ 55:
ԶՈՂՐԱՊԵԱՆ ԳԵՐԱԾ. ԿԻՐԵՂ. - Շարական, Լեռնական ձայնագրութեամբ: Առաջին տետր, էջ 130: Երկրորդ տետր, էջ 226: Վեներիկ, Ս. Վազար, 1957: Կը պարունակեն Շարականներ Ս. Խորիդոց մատակարարութեան, Տնօրինիկ, Ս. Խորիդոց մատակարարութեան, Նեղեցիլոց պատարագի, Հոգեհանգստեան, Օրհնութեան Ս. Հաղորդութեամբ, Կիրակամից, Կիրակեցի Բառասնորաց, Վազարու յարութեան եւ Ծաղկաբոյի:

ԼԵՐՄՈՆՏՈՎ Մ. - ԴԼ: (Բնագրից քարգմանց Զ. Զ. Միքայելեանի): Թեհրան, տպ. Մոդերն, 1957, էջ 54:

ԿԱՐՈՅԵԱՆ ՏՈՒՐ. Գ. Մ. - Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները: Պոսքրմ, 1957, էջ 557:

ԿՈՏԻԿԵԱՆ ԵՍԹԵՐ. - Մեծ Եղեռնի փոքրիկ յուշարձանը: Գոստովա, տպ. Սիփան, 1957, էջ 111:

ՀԻՆ ՆԱՄԻՋԵՒԱՆՅԻ. - Հին Նախնական զեպքերը: Թեհրան, տպ. Ալիք, 1954, էջ 85 (Երկու օրինակ):

ՃԷՏԻՏԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. - Հատընտիր պատմաւորներ (հայերէնի քարգմանում): Հատոր երկրորդ: Պէյրուք, տպ. Քրիստոնէական Զանգից Միութեան, 1957, էջ 253 (Երկու օրինակ):

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՐՓԻԱՐ. - Փունջ: Ֆրէզնոյ, 1952, էջ 120:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՐՓԻԱՐ. - Ծագական փունջ: Ֆրէզնոյ, տպ. Նոր Օր, 1954, էջ 237:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՐՓԻԱՐ. - Մարգարեաներու շարան: Գահիրէ, տպ. Յուսաբեր, 1957, էջ 615:

ՄԻՐԶԱՅԵԱՆ Զ. - Արու Ալի Սինա: Թեհրան, տպ. Զափար, 1954, էջ 40:

ՄԻՐԶԱՅԵԱՆ Զ. - Թաց մայրը: Թեհրան, տպ. Մոդերն, 1957, էջ 48:

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Պ. ԳՈՒՏՅԻ. - Վախճանը - վէպ: Պէյրուք, տպ. Արամազ, 1957, էջ 96:

ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ ՎԱՀԱՆ. - Չարեցի (Յուշեր եւ խորհրդածութիւններ): Գահիրէ, տպ. Յուսաբեր, 1957, էջ 132:

ՊԱՐՈՒՄԵԱՆ ԳԻՐԳ. Յ. - Պատմութիւն Այնթապի Հ. Յ. Դաշնակցութեան (1898-1922): Հալէպ, տպ. Տիգրիս, 1957, էջ 346:

ՊԵՐՃ ԿԱՐՈ. - Թակ - Ժամանցի պահեր: Իսթանպուլ, տպ. Հերմոն, 1957, էջ 45:

ՍԱՍՆԻՆԻ ԿԱՐՈ. - Պատմութիւն Տարօնի աշխարհի: Հրատարակչութեան Տարօնի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան: Պէյրուք, տպ. Սեւան, 1956, էջ 1252:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ		PRIX DE L'ABONNEMENT ANNUEL	
Իտալիոյ համար . . .	3000 Լիր	Pour l'Italie . . .	3000 Lires
Արտասահմանի համար . . .	6 Տոլար	Pour l'Etranger . . .	6 Dollars
Մէկ թիւը՝ 250 Լիր -	0,50 Տոլար	Le Numéro: 250 Lires -	0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti - Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia.
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia